



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՈՐՈՇՈՒՄ № 45Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԳԻ  
2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 21Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 65-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ Նախագահի 30.11.2017թ. թիվ ՆՀ-907-Ա հրամանագիրը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

## ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի «Դատավորների կնիքների և դրոշմակնիքների գծապատկերները հաստատելու մասին» թիվ 21Լ որոշման 1-ին հավելվածը լրացնել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Վահե Միսակյանի, Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ալֆրեդ Վարդանյանի և Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գոռ Շահբազյանի անվամբ կնիքների գծապատկերներով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի դեկտեմբերի 08-ից:

**Հայաստանի Հանրապետության  
դատարանների նախագահների  
խորհրդի նախագահ**

2017թ. դեկտեմբերի 07  
ք.Երևան

**Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ**